ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 08-ին ժամը 14:00-ին քաղաք Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոց 0 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու արտահերթ նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 16 անդամ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու արտահերթ նիստին հրավիրված են Էջմիածին քաղաքի քույր քաղաքների պատվիրակությունները, համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Համայնքի ղեկավարը Էջմիածին քաղաքի օրվա կապակցությամբ իր շնորհավորական խոսքն ուղղեց ներկաներին:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը: Օրակարգում ներառված են հետևյալ հարցերը՝

1. «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԵԴԱԼ»-Ի ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նիստը վարողը հայտարարաեց, որ նախապես հրապարակված օրակարգի հարցերից դուրս են գալիս Վաղարշապատ համայնքի պատվավոր քաղաքացի շնորհելու մասին երկու հարցերը և առաջարկեց օրակարգը հաստատել առանց վերոնշյալ հարցերի:

Զեկուցող՝ Դիանա Գասպարյան

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 16 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 16
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 08-ի արտահերթ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԵԴԱԼ»-Ի ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 72-Լ որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի «Համայնքի ղեկավարի մեդալ»-ի ձևը և շնորհման կարգը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 16 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 16

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 73-Լ որոշումը:

Ավագանու նիստն ավարտվեց 2024 թվականի հոկտեմբերի 08-ին ժամը 14:10-ին:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: